ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD
Poste Restante
Londres. [Angleterre].

*Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար։*

*Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս ապահովեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԷՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ. . . . . . 5 ֆրանկ.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ. . . . 3 »
ՄԻ ՀԱՄԱՐԸ. . . . ½ »

*Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։*

*Արեան ճաճիճներ — ահա ազատութեան ճանապարհը։*

*Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։*

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 9 ՑՈՒՆՎԱՐ Nr 9 | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

## ԿՌԻԱԾԱՂԻԿ




ՀԱՅԸ.— ԵԹԷ ՄԷԿ «ԷՍ» ԼԻ ՔԱՐՇԷ, ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾՈՒՄ ԿԸ ՍՏԱՆԱՅ.
(ՈՐՔԱՆ ԽԵՂՃԻՆ ԽԱՐԵՑԻՆ, ԲԱՅՑ ՆԱ ԴԱՐՁԵԱԼ ՑՈՅՑ ՏՈՒԻ)




ԵՐԷԿ.




ԱՅՍՕՐ.

ցել (օր. Հռոմի Թիւրք դեսպանի) կամ ֆօտոտիպիով հրատարակել տալ Թերթերում (օր. Illustrirttes Viener Extrablat, Nr 7, 95 Թ.), մի զառանցական մարմին, որ հէնց իր այդ ընթացքով ցոյց է տալիս, որ, յիրաւի, գործ չունի, որպէսզի գաղտնիք ունենայ և այդ պատճառով է իր իբր գաղտնի վկայագրերն ազատ հրատարակում, — կրկնում եմ, ինչպէս այդ ցուցամոլ անճարակները բոլորովին մոռացել են, որ նոյն իրանց „Դրօշակի" էջերում իրանց յատուկ պոռոտախօսութեամբ տղայամտաբար յայտարարել են ի լուր աշխարհի, թէ իրենք՝ „Դաշնակցութիւնը կը տայ հայկական ապստամբութեան նշանը": Մեծախօս խմբակի թէ խելքն է կարճ, թէ յիշողութիւնը: Եթէ, նրա ասելով, Հայ ապստամբական շարժումները գոյութիւն ունեն արդէն երեսուն տարիից ի վեր, եթէ հայ ժողովուրդն ընդունակ է առանց ուսուցիչների, ինքնաբերաբար, իր նախաձեռնութեամբ յեղափոխութիւն անելու, եթէ, վերջապէս, Սասունի ռամիկ ժողովուրդն է այդ մեծախօս խմբակի յեղափոխական ուսուցիչը, ինչպէս "Դրօշակն" է յայտարարում, այն ժամանակ որքան հիմա այդ խմբակն ինքը պէտք է զզվէ իր այն մեծամիտ ու ծիծաղաշարժ յայտարարութիւնից, որ անում էր երեք տարի առաջ, ինքն իրան ապստամբութեան նշանը ցոյց տվող և հայութեան փրկիչ հռչակելով: Նա իր չափը միթէ այն ժամանակ չը գիտէր և հիմա է խելքի է եկել: Խայտառակ ինքնադատապարտութիւն:

*

„Դրօշակն" իր երևելի դիւտերն անելով, այդպիսով ինքն իրան Թակարդի մէջ է գցում, մինչ իսկապէս նա միայն ուզում էր քօղի տակ ծածկել իր այն անխոստովանելի զգացումը, նախանձը, որ որդի պէս կրծում է նրա սիրտը: Նա պատրաստ է աչքը ծածկել իրականութեան առջև, բանազբօսիկ դատողութիւններ անել, տխմար ձևանալ, միայն թէ Հնչակեաններին կարողանայ պարսաւել, „Հնչակի" վարկը գցել, „խեղդել„, ինչպէս ասում են իրանք՝ „Դրօշակի" մարդիկը: Միւս կողմից էլ հէնց որ մի յեղափոխական աչքի ընկնող դէպք է երևան գալիս, որ կատարվում է հնչակեան արիւնով, անմիջապէս „Դրօշակի" մարդիկն իրանց տաք բոյներից դուրս են պրծնում և գաղտուկ կերպով տարածում ամեն տեղ, թէ իրանք են գործողները թէ Հնչակեան Մուրատներն իրանց մարդիկն են և շատ անգամ միամիտներն հաւատացնում թէ իրանք Հնչակեան են: Իսկ հրապարակով այդ բոլորը չեն յանդգնում յայտարարել, և Հնչակեանների հերոսութիւնները, նրանց գործերը, տարած յաղթանակները, նրանց արեան գնով վաստակած դափնիները, անտարակոյս, մեծ խանգարանք են լինում „Դրօշակի" մարդկանց խաղաղ քնի համար: Եւ նրանք հնարներ են որոնում իրանց գլխում. — „եթէ մենք, ասում են նրանք, եթէ մենք չը կարողացանք „ապստամբութեան նշանը տալ" և նշանը տվին Հընչակեանները, եթէ մենք մի գործ էլ չը տեսանք, մի գործիչ էլ չունեցանք, չը նայած, որ դրամապէս Հնչակեաններից շատ հարուստ էինք, մեր այդ արատը ծածկելու համար՝ ասենք թէ Հայաստանում ոչ մեր և ոչ Հնչակեանների կողմից գործիչներ չը կային, այլ թէ հայ յեղափոխական շարժումներն ինքնաբերաբար գոյութիւն ունեն երեսուն տարիից ի վեր:„

*

Այդ է „Դրօշակի" հոգու գաղտնիքի ամբողջ տրամաբանութիւնը, որ նրան թելադրում է ամեն տեսակ աչքակապ դիւտեր անել: Հիմա նա անհամբերութիւնից դողում է, թէ ե՞րբ մի գործ կը լինի, որ Հնչակեան գործ չը լինի, որպէսզի կարողանայ „Դրօշակն" իրան վերագրել: Նա փնտռում է էշի պայտ, որ այդ ցոյց տալով աշխարհին, հաւատացնէ թէ էշ ունի: Բայց գ ո ր ծ տեսնելու համար „Դրօշակի" մարդկանց մի բան է պակասում, ճիշդ է թէև, որ այդ բանին նրանք այնքան կարեւորութիւն չեն տալիս: Այդ բանը ոչ թէ նիւթական, այլ բարոյական հարստութիւնն է:

*

„Դրօշակն" իրան և իր մարդկանց անուանում է Սասունի ժողովրդի աշակերտ, մի խօսք, որ եթէ նայես միւս կողմից, դուրս է գալիս, որ նրանք յեղափոխական են դարձել Սասունի դէպքից յետոյ: Սասունցի ժողովրդի աշակե՛րտ — ո՜չ խոստովանութիւն է դա երեք տարի առաջ ամբողջ հայ ժողովրդին „ապստամբութեան նշանը տալու" յաւակնութիւն ունեցող խմբակի կողմից: Բայց խորհուրդ ենք տալիս, որ լաւ հետևեն իրանց ուսուցիչներին և... կէս ճանապարհից յետ չը դառնան.. ազգասիրաբար: Տեսէք, սակայն, որ նոյն իսկ „Դրօշակում" փառաբանված Մարգար վարժապետները, ծիրայրները, Մուրատները, որ Սասունցիների, հայ ժողովրդի յեղ. ուսուցիչներն են, յայտնի կերպով ու պաշտօնապէս Հնչակեաններ էին, մի բան, որ գիտէ ժողովուրդը, Թիւրք կառավարութիւնը, Եւրոպան անգամ... Ուրեմն „Դրօշակն" իր մարդիկներով լինելով աշակերտներ ռամիկ Սասունցիների, այդպիսով յայտնվում են Հնչակեանների աշակերտների աշակերտ..... Ի՛նչ հիասթափութիւն, ի՛նչ դառնութիւն „Դրօշակի" և իր մարդկանց համար.... Նա՛և „Հընչակի" և Հնչակեանների համար....

* * *

Աշըգեան յայտարարած է, թէ նոր պատրիարքը իր ծ ո ւ ռ քաղաքականութեամբ ազգը պիտի կործանէ...

—

## ՀԱՅԱՍԻՐ ԱՆԳԼԻԱՑԻ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

ՊԱՏԿԵՐ I. — Անգլիացի հայասէրը հարուստ հայ վաճառականին.—

„Տվէք ինձ 100 ոսկի և մենք մեծ միտինգ կը կազմենք, որի հետևանքը.... Հայաստանի ազատումը կը լինի..."

Վաճառականը (հիացումով) — „Մի՞թէ.. գեղեցի՜կ գործ... Ահա՛ ձեզ 200 ոսկի:"

ՊԱՏԿԵՐ II. — Նոյն անգլիացին միտինգից յետոյ իր մի բարեկամին.—

„Լաւ միտինգ ունեցանք, այնպէս չէ՞... գիտէ՞ք, որ ամբողջ ծախսը հազիւ 5 ոսկի նստեց ինձ.. (առանձին) Ի՛նչ հրաշալի հասոյթներ...".